ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐՄԷՆ ՇԱՀԱԶԻԶԵԱՆ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մեծարգոյ պրն. Շահազիզեան,

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս Եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք Ձեր հայրենանուէր գործերին, որոնք պատմում են առ Աստուած Ձեր հաւատի, Ձեր ազգասէր ու եկեղեցասէր ոգու մասին:

Այսօր ուրախ ենք անդրադառնալու, որ Դուք երկար տարիներ ազնիւ բարերարութիւններով բարի աւանդ էք բերում ազգանուէր ծրագրերի իրականացմանը՝ նախանձախնդիր լինելով, որպէսզի առաւել բարօր ու բարգաւաճ լինի հայորդեաց կեանքը Հայաստանում եւ Արցախում: Ազնիւ հոգուց ծնուած Ձեր իրագործումները կարեւոր ներդրում են հայրենաշինութեան սուրբ եւ պատուաբեր գործին:

Գոհունակութիւն է Մեզ համար նաեւ, որ Դուք հաւատաւոր հոգով մշտապէս սատարում էք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց Թեմի գործունէութեանը, որպէսզի Ռուսաստանի Դաշնութիւնում բնակուող մեր ժողովուրդը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու առաջնորդութեամբ շարունակի պահպանել հաւատարմութիւնը իր ազգային ու հոգեւոր ինքնութեանը, հայրենական արժէքներին: Եկեղեցանուէր նոյն ոգով Դուք ազնիւ մասնակցութիւն բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցման աստուածահաճոյ գործին, որը նոր շինութիւն ու պայծառայութիւն պիտի բերի ռուսահայ համայնքի հոգեւոր կեանքին:

Բարձր գնահատելով Ձեր ազգանուէր ծառայութիւնները մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն եւ սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս Եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով՝ Բարձրեալն Աստուծոյ շնորհներն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Ամենահնամ Տէրը պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ ազգաշէն գործերի նորանոր յաջողութիւններ:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինեն Ձեր կեանքից եւ ընտանեկան Ձեր յարկից:

Ո՛ղջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԳԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 788